ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

05 հոկտեմբեր 2022 թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ ուսուցիչներ.

Շնորհավորում եմ Ձեզ Ուսուցչի տոնի կապակցությամբ: Այս օրը հաճելի առիթ է ընձեռնում երախտիքի խոսքեր հղել Ձեզ՝ շնորհակալ աշխատանքի համար: Այսօր իսկապես տոն է մեր ժողովրդի համար, քանզի դժվար է թերագնահատել Ձեր դերը մատաղ սերնդի կրթության, նրա հայեցի դաստիարակության ու ազգապահպանման գործում: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ուսուցչի աշխատանքը միշտ մեծ հարգանք է վայելել ոչ միայն մեր սիրելի համայնքում, այլ հայ հասարակության շրջանում ընդհանրապես: Դժվար է գտնել ավելի բարդ, միաժամանակ ավելի պատվաբեր գործ, քան մատաղ սերունդ կրթելն ու հասարակության արժանապատիվ անդամ ձևավորելու առաքելություն ունենալը: Կխնդրեի, որ մեր ուսուցիչներն ազգին ու սերունդներին կրթելու գործին նվիրվեն՝ դաստիարակելով հայրենասիրություն, առաքինություն, պատասխանատվություն սեփական ընտանիքի և հայրենիքի նկատմամբ և թո՛ղ մեր հայրենիքի զարգացման գործին իրենց ազնիվ վարքով օրինակ ծառայեն մատաղ սերնդին: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում նաև նման հայորդիներ և ազգի նվիրյալներ կրթելու և դաստիարակելու համար: Կրկին շնորհավորում եմ մեր հարգարժան ուսուցիչներին, մաղթում առողջություն, երջանկություն անձնական կյանքում և անթաքույց երախտագիտություն՝ բոլոր սաների աչքերում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ